ՏԵՂԵԿԱՆՔ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 14. Կուսակցության անվանումը

1. Կուսակցության անվանումը ներառում է «կուսակցություն» բառը:

2. Կուսակցության անվանումը կամ հապավումը չպետք է նույնական կամ շփոթելու աստիճան նման լինի գրանցված կուսակցությունների նախկին անվանումներին, գրանցված կուսակցությունների ու այլ հասարակական միավորումների, տվյալ կուսակցության գրանցմանը նախորդող հինգ տարվա ընթացքում «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով գործունեությունը արգելված կուսակցությունների, ինչպես նաև գրանցման գործընթացում գտնվող կուսակցությունների անվանումներին կամ դրանց հապավումներին:

3~~.~~ Կուսակցության անվանումը չի կարող պարունակել անձնանուն կամ դրանց շփոթելու աստիճան նման անվանումներ և/կամ դրանց հոլովաձևեր

~~3. Կուսակցության անվանման մեջ հանրահայտ ֆիզիկական անձի լրիվ կամ կրճատ անունը կարող է օգտագործվել միայն այդ անձի, իսկ հանրահայտ ֆիզիկական անձի մահացած լինելու դեպքում՝ նրա ժառանգի գրավոր համաձայնությամբ: Ժառանգ չունենալու դեպքում մահացած հանրահայտ անձի անունը կարող է օգտագործվել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:~~

4. Կուսակցության անվանման մեջ չի թույլատրվում օգտագործել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անվանումները կամ դրանց շփոթելու աստիճան նման անվանումներ:

5. Կուսակցության անվանումը չի կարող պարունակել վիրավորական կամ զրպարտչական բնույթի բառեր կամ այլ արտահայտություններ:

6. Կուսակցության անվանումը չպետք է խախտի քաղաքացիների և իրավաբանական անձանց մտավոր սեփականության իրավունքը:

7. Կուսակցություններ չհանդիսացող իրավաբանական անձինք, ինչպես նաև դրանց առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները չեն կարող իրենց անվանման մեջ օգտագործել «կուսակցություն» բառը:

8. Կուսակցության տարածքային ստորաբաժանումները օգտագործում են կուսակցության անվանումը՝ նշելով համապատասխան տարածքը: